ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» փետրվարի 2020թ. № 57

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արայիկ Հարությունյանի 2020 թվականի փետրվարի 14-ի հայտը՝ *որոշում եմ.*

1. Անհատ ձեռնարկատեր Արայիկ Հարությունյանին (ՀՎՀՀ 66933845) տալ «ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 38 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020. փետրվարի 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» փետրվարի 2020թ. № 58

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵՐԺԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սերժիկ Հովակիմյանի 2020 թվականի փետրվարի 14-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Սերժիկ Հովակիմյանին (ՀՎՀՀ 66002095) տալ «ք. Սպիտակ Ալեք Մանուկյան» փողոցի վրա գտնվող կրպակում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի մարտի 31-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» փետրվարի 2020թ. № 59

«ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ի 2020 թվականի փետրվարի 14-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06802127) տալ «ք. Սպիտակ, Երևանյան խճուղի» հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման թվով երկու կայաններում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի մարտի 31-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» փետրվարի 2020թ. № 60

«ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ի 2020 թվականի փետրվարի 14-ի հայտը, ***որոշում եմ.***

1. «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06802127) տալ «ք. Սպիտակ, Ալ. Մանուկյան 1» հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի մարտի 31-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» փետրվարի 2020թ. № 61

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՂՈՒՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Աղունիկ Մարտիրոսյանի 2020 թվականի փետրվարի 14-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Աղունիկ Մարտիրոսյանին (ՀՎՀՀ 66003441) տալ «ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 1» հասցեում գտնվող սեղմված բնական գազի լցավորման կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» փետրվարի 2020թ. № 62

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱԿՈԲ ՔԱՉԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հակոբ Քաչանյանի 2020 թվականի փետրվարի 14-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Հակոբ Քաչանյանին (ՀՎՀՀ 66840424) տալ «ք. Սպիտակ, Ուզբեկական 78/1» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն 53.01 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» փետրվարի 2020թ. № 63

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՏՈՒՐ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արտուր Թորոսյանի 2020 թվականի փետրվարի 13-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Արտուր Թորոսյանին (ՀՎՀՀ 66946159) տալ «ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 90,7 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» փետրվարի 2020թ. № 64

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 197 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 197 որոշման մեջ Միեր Արտավազդի Դարչինյանին պատկանող հողամասի չափը «0,16843»-ի փոխարեն սխալմամբ գրվել է «0,16», կադաստրային ծածկագիրը «008-075»-ի փոխարեն սխալմամբ գրվել է «008-040», իսկ հողամասի վրա գտնվող շինությունները չեն համապատասխանում քաղաքաշինական նորմերին, հիմք ընդունելով «Տեխպրոյեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրամադրված եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված չափագրման հաշվետվությունը և Միեր Արտավազդի Դարչինյանի ներկայացուցիչ Գևորգ Արտավազդի Դարչինյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան, Առափնյա, Պանրագործների, Թումանյան և Բանավան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 197 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման կից ցուցակի 51-րդ տողում նշված «008-040» թվերը փոխարինել «008-075» թվերով, իսկ «0,1600» թիվը փոխարինել « 0,16843» թվով,

2) որոշման կից ցուցակի 51-րդ տողից հանել «0,0189» թիվը:

2. Միեր Արտավազդի Դարչինյանին պատկանող 06-006-0008-0075 ծածկագրով 0,16843 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան, թիվ 385» հասցեն:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.փետրվարի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» փետրվարի 2020թ. № 65

ԿԱՌԼԵՆ ԱՂԱՄԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետով և 53-րդ կետի «գ» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2103978 վկայականը և Կառլեն Մացակի Աղամալյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կառլեն Մացակի Աղամալյանին սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06006 8-39 կադաստրային ծածկագրով, 0,218 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի՝ «քաղաք Սպիտակ, Առափնյա թաղամաս» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 46» հասցեով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» փետրվարի 2020թ. № 66

ԳԱԼՈՒՍՏ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետով, 53-րդ կետի «գ» ենթակետով և 55-րդ կետով, հաշվի առնելով, որ Լարիսա Խաչիկի Մաթոսյանի, Ալիկ Հրաչի Հակոբյանի և Հովհաննես Ալիկի Հակոբյանի մահից հետո Սպիտակ համայնքի Գրիգոր Լուսավորիչ թաղամասում գտնվող անշարժ գույքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2019 թվականի սեպտեմբերի 30-ի վկայագրերի փոխանցվել է Գալուստ Ալիկի Հակոբյանին, սակայն անշարժ գույքի «ք.Սպիտակ, Գրիգոր Լուսավորիչ թաղամաս, թիվ 6/4» հասցեի փոխարեն սխալմամբ տրամադրվել է «ք.Սպիտակ, Թան թաղամաս, թիվ 6/4» հասցեն, հիմք ընդունելով Գալուստ Ալիկի Հակոբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գալուստ Ալիկի Հակոբյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Գրիգոր Լուսավորիչ թաղամասում գտնվող անշարժ գույքի «ք.Սպիտակ, Թան թաղամաս, թիվ 6/4» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Գրիգոր Լուսավորիչ թաղամաս, թիվ 6/4» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» փետրվարի 2020թ. № 67

ՍԻՄՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՇԻՐՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 2020 թվականի փետրվարի 21-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը Սիմոն Հովհաննեսի Շիրոյանի կողմից Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից հատվածներ ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին՝ **որոշում եմ.**

1. Սիմոն Հովհաննեսի Շիրոյանի կողմից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2020 թվականի փետրվարի 24-ին, ժամը 11:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.փետրվարի 21
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» փետրվարի 2020թ. № 68

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԾՐՈՒՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արծրուն Սողոմոնյանի 2020 թվականի փետրվարի 19-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Արծրուն Սողոմոնյանին (ՀՎՀՀ 66006527) տալ «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 82» հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի մարտի 31-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 21
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» փետրվարի 2020թ. № 69

ՎԱՐԴԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պետրոս Աշոտ Մելքոնյանի մահից հետո Սպիտակ համայնքի Քըրք Քըրքորյան փողոցի վրա գտնվող անշարժ գույքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2020 թվականի փետրվարի 12-ի վկայագրի փոխանցվել է Վարդանուշ Վահանի Հարությունյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Վարդանուշ Վահանի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վարդանուշ Վահանի Հարությունյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Քըրք-Քըրքորյան փողոցի վրա գտնվող 0,177 հա մակերեսով տնամերձ հողամասին, դրա վրա գտնվող 99,1 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին և 35,1 քառակուսի մետր մակերեսով մառանին տրամադրել «քաղաք Սպիտակ, Քըրք-Քըրքորյան փողոց, թիվ 202» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» փետրվարի 2020թ. № 70

ՎԻՏԽԱՐ ԱՍՔԱՆԱԶԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով և 16-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման 3-րդ կետի «ը» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Վիտխար Ասքանազի Խաչատրյանին պատկանող Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06-006-0040-0056 կադաստրային ծածկագրով 0,13696 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողի հարկի վճարման անդորրագրերը, «Գ.ՎԵՔԻԼՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրամադրած անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Վիտխար Ասքանազի Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել հողհատկացման հիմքերը և օրենքի ուժով ճանաչել Վիտխար Ասքանազի Խաչատրյանի (ծնված 06.09.1950թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06-006-0040-0056 կադաստրային ծածկագրով 0,13696հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 158 » հասցեն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Վիտխար Ասքանազի Խաչատրյանին՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմել Սպիտակի համայնքապետարան սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վրա առկա բնակելի նշանակության 83,74 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ինքնակամ կառույցներն օրինականացնելու գործընթաց սկսելու նպատակով:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» փետրվարի 2020թ. № 71

ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 156 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ կետերով և 13-րդ կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշումով, հաշվի առնելով, որ Հայկ Սերյոժայի Լամբարյանին սեփականության իրավունքով պատկանող Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06-006-0447-0003 կադաստրային ծածկագրով, 0,06839 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1990 թվականին ինքնակամ կառուցված 28,34 քառակուսի մետր մակերեսով անասնագոմի, 2005 թվականին ինքնակամ կառուցված 6,75 քառակուսի մետր մակերեսով պարսպի և 0,48 քառակուսի մետր մակերեսով պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13022020-06-0062 վկայականը և Հայկ Սերյոժայի Լամբարյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Հայկ Սերյոժայի Լամբարյանին սեփականության իրավունքով պատկանող «ք.Սպիտակ, Տեր-Սիմոնյան փողոց, թիվ 156» հասցեում գտնվող 06-006-0447-0003

կադաստրային ծածկագրով 0,06839 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1990 թվականին ինքնակամ կառուցված 28,34 քառակուսի մետր մակերեսով անասնագոմը, 2005 թվականին ինքնակամ կառուցված 6,75 քառակուսի մետր մակերեսով պարիսպը և 0,48 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Հայկ Սերյոժայի Լամբարյանի սեփականության իրավունքը:

3. Հայկ Սերյոժայի Լամբարյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 41 143 ՀՀ դրամ օրինականացման վճար,

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել ՀՀ կադաստրի կոմիտե:

5.Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Ավետիսյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 21

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» փետրվարի 2020թ. № 72

ՎԱՀԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «բ» ենթակետով և 32-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18122019-06-0014 և թիվ 18122019-06-0011 վկայականները, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված միավորված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Վահան Տիգրանի Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Վահան Տիգրանի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Երևանյան խճուղի, թիվ 66 հասցեում գտնվող 06-006-0098-0013 կադաստրային ծածկագրով 0,1 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը և Երևանյան խճուղի, թիվ 68 հասցեում գտնվող 06-006-0098-0006 կադաստրային ծածկագրով 0,1 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը՝ համաձայն հատակագծի:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով միավորված անշարժ գույքի ճշգրտված հատակագիծը և տրամադրել «քաղաք Սպիտակ, Երևանյան խճուղի, թիվ 66-68» հասցեն:

3. Սույն որոշման 2-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 21
ք.Սպիտակ